ՀՈՒՇԱԳԻՐ

Մենք՝ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետ է. Ֆ.Ղազարյանս և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի վարչակազմի ղեկավար Ս.Վ. Խաչատրյանս, 2012 թվականի հունիսի 28-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Բերձոր քաղաքում հանդիպելով և քննարկելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի միջև փոխհամագործակցության դրվածքը և նպատակ ունենալով ավելի ընդլայնել այդ գործակցությունն ու այն տարածել նաև կենսագործունեության նոր ոլորտներում, հաստատում ենք Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի միջև կրթամշակութային, սպորտի, տուրիզմի և հանգստի կազմակերպման, գյուղատնտեսության զարգացման, վարչարարության ոլորտում ձեռք բերած փորձերի փոխանակման և կենսագործունեության մյուս բնագավառներում 2012 թվականի համար նախատեսված միջոցառումների ու փոխայցելությունների ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի, և հանձնարարում Վայոց ձորի մարզպետարանի և Քաշաթաղի շրջանի վարչակազմի պատասխանատուներին՝ կոնկրետ կազմակերպչական աշխատանքներ իրականացնել ժամանակացույցում ընդգրկված միջոցառումները կյանքի կոչելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Է.Ֆ. ՂԱԶԱՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆԻ ՎԱՐՉԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Ս. Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ք. ԲԵՐՁՈՐ, 28 ՀՈՒՆԻՍԻ 2012Թ.